

Համարը N 10-Ա
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը Չի հրապարակվել
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 17.01.2012

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 12.01.2012
Ստորագրման ամսաթիվը 16.01.2012
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

⊕ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԵՐԵՎԱՆԻ ՕՊՏԻԿԱ-ՖԻԶԻԿԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԵՎ «ՈԱԴԴՆՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԶԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունվարի 2012 թվականի N 10-Ա

«ԵՐԵՎԱՆԻ ՕՊՏԻԿԱ-ՖԻԶԻԿԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԵՎ «ՈԱԴԴՆՖԻԶԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԶԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածին, 67-րդ հոդվածի 1-ին, 68-րդ հոդվածի 7-րդ կետերին և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Թույլատրել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 49/2 հասցեում գտնվող՝ 34421.8 հազ. դրամ արժեք (ներառյալ ավելացված արժեքի հարկը և կադաստրային արժեքը), 8971.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեք և 1150.7 քառ. մետր մակերես ունեցող շենքով (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N 2244357) և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.09254 հեկտար հողամասով (այսուհետ գույք) վճարել այդ ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերի մարումից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան չափով նվազեցնել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի սեփականության իրավունքը պետությանը փոխանցվելուց առաջացող ավելացված արժեքի հարկի վճարումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը, դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո, ամրացնել «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

5. Վերակազմակերպել «Երևանի օպտիկա-ֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտ» և «Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական

ընկերությունները՝ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով:

6. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել «Երևանի օպտիկա-ֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտ» և «Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագրերի և փոխանցման ակտերի կազմման ու հաստատման աշխատանքների կատարումը, դրան համապատասխան հաստատել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը և «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ համատեղ ապահովել սույն որոշման 4-րդ կետում նշված գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

7. Սահմանել, որ սույն որոշումից բխող գույքային իրավունքների, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարելու պարտավորությունը կրում է «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2012 թ. հունվարի 16
Երևան